ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

17.05.2023 թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 1-ինից 3-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում (զեկ.՝ Վ. Ա. Աղաբաբյան)։
2. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունների նախնական ներկայացում և քննարկում (զեկ.՝ Վ. Ա. Աղաբաբյան)։
3. Հաղորդում ԵՊՀ ԻՄ սովորողների պրակտիկայի կազմակերպման գործընթացի մասին (զեկ.՝ Վ. Ա. Աղաբաբյան)։
4. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ներկայացում (զեկ.՝ Վ. Ա. Աղաբաբյան)։

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը և գործընթացի կազմակերպման ընթացքը: Զեկուցողը ներկայացրեց, որ 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով՝ 2-րդ ընթացիկ ստուգումները, քննություններն ու ստուգարքները

կանցկացվեն մայիսի 31-ից մինչև հունիսի 4-ը, իսկ քննաշրջանը կանցկացվի հունիսի 7-ից հունիսի 25-ը: Զեկուցողը նշեց, որ քննության օրերը քննարկվել են դասախոսական կազմի, ուսանողների հետ, երկար ժամանակ է փակցված են և առարկություններ չեն եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյան, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. *Հաստատել 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի՝ 1-ինից 3-րդ կուրսերի 2-րդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:*
2. *Հաստատված ժամանակացույցը ներկայացնել ՈՒՄՎ :*

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը և «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ Հ. Ասատրյանը: Զեկուցողները ներկայացրեցին ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների՝ հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունները: «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ Հ. Ասատրյանը նշեց, որ ամբիոնի առարկաները բոլորը բաշխված են և թափուր ժամեր չկան: Վ. Աղաբաբյանը ներկայացրեց «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի անհատական ծանրաբեռնվածությունը և ավելացրեց, որ ի տարբերություն մյուս ամբիոնի, այստեղ կան թափուր առարկաներ և ունեն դասախոսների պակաս: Նա նշեց, որ նախնական պայմանավորվածություն կա ոլորտի մասնագետների հետ, և մինչև ուսումնական տարին սկսելը որևէ մասնագետի պակաս չի զգացվի: Նա նշեց, որ հաշվի է առնվել դասախոսների մասնագիտական կարողությունները, նախորդ տարիների դասավանդման փորձը:

Քննարկումների արդյունքում կատարվեց դասաժամերի նախնական բաշխում՝ թողնվելով նաև թափուր ժամեր: Յուրաքանչյուր դասախոս ստացավ 2023-2024 ուստարվա իր նախնական ծանրաբեռնվածությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ան. Չիբուխչյանը, Տ. Բագամյանը, Հ. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունների նախնական բաշխման գործընթացը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ ուսումնական պլանով ուսումնական պրակտիկա նախատեսված է եղել «Դիզայն» III, և մասնագիտական պրակտիկա «Դիզայն» IV /Ղեկավար՝ Կ. Ղարախանյան /, ուսումնական պրակտիկա «Դեկորատիվ-կիրառական արվեստ» III /Ղեկավար՝ Դ. Չիբուխչյան/ և մասնագիտական պրակտիկա «Դեկորատիվ-կիրառական արվեստ» IV /Ղեկավար՝ Ան. Չիբուխչյան/ կուրսերում: Մասնագիտական պրակտիկայի ընթացքում 2023թ. փետրվարի 7-ից մարտի 21-ը «Դիզայն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի 9 ուսանողները աշխատել են ավարտական աշխատանքների շուրջ, իսկ ուսումնական պրակտիկայի ընթացքում 2023թ. փետրվարի 7-ից մայիսի 26-ը «Դիզայն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի 12 ուսանողները աշխատել են առաջադրանքների շուրջ: 2023թ. փետրվարի 7-ից ապրիլի 25-ը, դեկորատիվ-կիրառական արվեստ մասնագիտության երրորդ կուրսում ուսումնական պրակտիկային մասնակցել է 9 ուսանող: Այն անց է կացվել ըստ նախապես հաստատված ժամանակացույցի և ծրագրի: 2023թ. փետրվարի 7-ից մինչև մարտի 21-ը, դեկորատիվ-կիրառական արվեստ մասնագիտության չորրորդ կուրսում, ըստ ուսումնական պլանի, կայացավ մասնագիտական պրակտիկա: Պրակտիկային մասնակցել է 8 ուսանող: Մասնագիտական պրակտիկայի նպատակն

էր ավարտական աշխատանքների ոլորտային շրջանակներում իրականացնել հետազոտական աշխատանք և հիմնավորել նախագծի գործնական նշանակությունը:

Պրակտիկան իրականացվել է հաստատված դասատախտակով, եղել է ՄԿՊԿ բաժնի մշտական հսկողության տակ: Ուսանողների մասնակցությունը և ցուցաբերած արդյունքները եղել են գոհացուցիչ: Այդ մասին են փաստել նաև ղեկավարները՝ ներկայացրած հաշվետվություններում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2022-2023 ուսումնական տարվա II կիսամյակի պրակտիկաների աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ զեկուցող Վ. Աղաբաբյանը ներկայացրեց կրթական ծրագրի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքները: Նա նշեց, որ ընդհանուր առմամբ կրթական ծրագիրը պատրաստ է 70%-ով: Նա նշեց, որ խնդիր կա որոշ կրթական ծրագրերի նկարագրիչների վերջնական տեսքի բերելու հետ: Զեկուցողը նշեց, որ խումբը անընդհատ աշխատում է և սահմանված ժամանակում կներկայացվեն կրթական ծրագրերի վերանայված տարբերակները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյան, Ա. Չիբուխչյանը, Ք. Մխիթարյանը:

Ամբիոնի վարիչը ևս մեկ անգամ դասավանդող դասախոսներին հորդորեց վերջնական տեսքի բերել նոր՝ 2023-27 կրթական ծրագիրը, հետևել ուսումնական պլանին և փորձել ավելի արդիական և մրցունակ ծրագիր ներկայացնել:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքները համարել բավարար։

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ